



<https://www.printo.it/pediatric-rheumatology/AM/intro>

Վերջույթների ցավային համախտանիշներ

Տարբերակ 2016

4. Երիթրոմելալգիա

4.1 Ի՞նչ է սա:

Սա նաև կոչվում է «Երիթերմալգիա»: Հիվանդության անունը ծագում է 3 հունարեն բարերից՝ erythros (կարմիր), melos (վերջույթ), algos (ցավ): Սա չափազանց հազվադեպ է հանդիպում, թեև հնարավոր են ընտանեկան դեպքեր: Շատ երեխաների մետ հիվանդության առաջին նշաններն ի հայտ են գալիս մոտ 10 տարեկանում: Ավելի հաճախ հանդիպում է աղջիկների մոտ:

Կլինիկական նշաններ են ոտնաթաթերի, կամ ավելի հազվադեպ ձեռքերի այրոցի զգացումը, տաքությունը, կարմրությունը և այտուցը: Այս գանգատները ուժեղանում են տաքի հետ շփումից և մեղմանում են վերջույթը սառեցնելուց: Որոշ երեխաներ ընդհանրապես հրաժարվում են իրենց ոտքերը սառը ջրից դուրս հանել: Հիվանդությունը չի նահանջում: Հիվանդության կառավարման ամենաարդյունավետ եղանակը տաքից և ակտիվ վարժություններից խուսափումն է:

Կիրառվում են բազմաթիվ դեղեր ցավը նվազեցնելու համար, այդ թվում հակաբորբոքային դեղեր, ցավազրկողներ և դեղեր, որոնք լավացնում են արյան շրջանառությունը (այսպես կոչված վազոդիլատատորներ): Բժիշկը կնշանակի դեղեր, յուրաքանչյուր երեխայի համար անհատականորեն: